



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Քաղ. Երևան

4 ապրիլի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի

Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի

Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով Արշակ Մկրտչյանի անհատական դիմումի ընդունելիության
հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Արշակ Մկրտչյանը 2018թ. մարտի 14-ին դիմել է ԹԾ սահմանադրական դատարան: Թերությունները շտկելուց հետո դիմողի ներկայացրած թվով երկրորդ դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2018Ճ. մարտի 15-ին:

Դիմողը ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում խնդրել է «Որոշել ՀՀ ընտրական օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, 47-րդ հոդվածի 5-րդ մասի, 48-րդ հոդվածի 7-րդ մասի և ՀՀ վարչական դատավարության

օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների և իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության՝ ՀՀ Սահմանադրության 1-ին, 2-րդ, 3-րդ, 28-րդ, 42-րդ հոդվածներին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ, 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցը»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությունը և Արշակ Մկրտչյանը հայցադիմում են ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի, թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովի՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 8-ի թիվ 156-Ա որոշումն անվավեր ճանաչելու, և/կամ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին վերջինիս ներկայացված դիմում-բողոքների պահանջները բավարարող բարենպաստ վարչական ակտ ընդունել պարտավորեցնելու, թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովի գործողությունները և/կամ անգործությունը, որոնց հետևանքով խախտվել են հայցվորների իրավունքները, ոչ իրավաչափ ճանաչելու պահանջների մասին: Հայցվորները միջնորդել են վերականգնել բաց թողնված դատավարական ժամկետները, ինչպես նաև որպես ծանոթություն նշել են, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «ժդ» կետի ուժով ազատված են պետական տուրքի վճարման պարտավորությունից:

ՀՀ վարչական դատարանը 2017 թվականի ապրիլի 16-ի որոշմամբ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության միջնորդությունը՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ, մերժել է, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության հայցադիմումի ընդունումը մերժել է:

ՀՀ վարչական դատարանը 2017 թվականի ապրիլի 16-ի նույն որոշմամբ դիտորդ Արշակ Մկրտչյանի կողմից ներկայացված հայցադիմումը վերադարձրել է՝ հայցադիմումը Արշակ Մկրտչյանի կամ վերջինիս ներկայացուցչի /ներկայացուցիչների/ կողմից ստորագրված չլինելու հիմքով:

Դիտորդ Արշակ Մկրտչյանը ՀՀ վարչական դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 16-ի որոշումն ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում կրկին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի, թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովի՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 8-ի թիվ 156-Ա որոշումն անվավեր ճանաչելու, և/կամ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին վերջինիս ներկայացրած դիմում-բողոքների պահանջները բավարարող բարենպաստ վարչական ակտ ընդունել պարտավորեցնելու, թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովի գործողությունները և/կամ անգործությունը, որոնց հետևանքով խախտվել են հայցվորների իրավունքները, ոչ իրավաչափ ճանաչելու պահանջների մասին:

Դիտորդ Արշակ Մկրտչյանը միջնորդել է վերականգնել բաց թողնված դատավարական ժամկետները:

ՀՀ վարչական դատարանը 2017 թվականի ապրիլի 18-ի որոշմամբ դիտորդ Արշակ Մկրտչյանի կողմից ներկայացված միջնորդությունը՝ բաց թողնված դատավարական ժամկետները վերականգնելու վերաբերյալ, մերժել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իր՝ 2017 թվականի հունիսի 5-ի որոշմամբ ՀՀ վարչական դատարանի 2017 թվականի ապրիլի 18-ի թիվ ՎԴ/3309/05/17 վարչական գործով վերաքննիչ բողոքը մերժել է՝ «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը մերժելու և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնելով ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանի 2017թ. օգոստոսի 2-ի որոշմամբ մերժվել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը:

3. Ըստ դիմողի՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերը դրվել են իր՝ թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովի՝ ընտրական գործընթացների շրջանակներում գործունեության և վերջինիս տնօրինման և տիրապետման տակ գտնվող բոլոր ընտրական փաստաթղթերի դիտարկման և դրանց ծանոթանալու իրավունքի սահմանափակման հիմքում: Այդ պարագայում խախտվում են, սահմանա-

փակվում են ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վերահսկողության՝ դիտորդական առաքելության միջոցով, էությունը և տրամաբանությունը:

Դիմողը նշում է, որ ընտրությունների և ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վստահության ձևավորման տեսանկյունից դիտորդական առաքելության, դիտորդների գործունեությունը ենթադրում է շատ ավելի խոր ու ընդարձակ դիտորդական իրավունքներ, որոնք անհրաժեշտ և բավարար կլինեն ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության ձևավորման և ամրապնդման համար:

Դիմողը նշում է, որ թիվ 11 տարածքային ընտրական հանձնաժողովը, թույլ չտալով ծանոթանալ իր տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին և ինքնուրույն կատարել քաղվածքներ, ստանալ պատճեններ, խոչընդոտելով դիմողի՝ որպես հանրային հսկիչի աշխատանքները, դուրս հրավիրելով վերջինիս տարածքային ընտրական հանձնաժողովից, մեկուսացնելով հանձնաժողովի աշխատանքներից, խախտել է դիմողի՝ տեղեկատվություններ փնտրելու և ստանալու իրավունքը:

Դիմողը գտնում է, որ դիմողի իրավունքների սահմանափակումը չի հետապնդել որևէ իրավաչափ նպատակ, քանի որ ընտրությունների ընթացքում հանրային հսկիչ հանդիսացող դիտորդի՝ ընտրական հանձնաժողովի բոլոր փաստաթղթերին ծանոթանալու և ընտրական հանձնաժողովի գործունեությունը դիտարկելու իրավունքի սահմանափակումը չի բխում հանրային գերակշռող շահից, այլ հակառակը՝ հանրային շահը թելադրում է ընտրական գործընթացի առավել թափանցիկություն և դրա նկատմամբ հանրային վերահսկողության արդյունավետություն:

Դիմողը նշում է, որ իր՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքները խախտվել են, քանի որ նրա վրա դրվել է իր համար իրավական որոշակիության սկզբունքին չհամապատասխանող և անկանխատեսելի, ինչպես նաև օրենքով չսահմանված և/կամ անհամաչափ և իրավաչափ նպատակ չհետապնդող պարտավորություն:

Ըստ դիմողի՝ վիճարկվող կարգավորումների համաձայն անորոշ է մնում, թե կոնկրետ որն է հանդիսանում որոշման բողոքարկման ժամկետի հաշվարկման սկիզբը: Եթե այդ ժամկետի հաշվարկման հիմքում դրված է որոշման ուժի մեջ մտնելու պահը,

այսինքն՝ ԿԸՀ նիստով հրապարակման պահը, ապա բողոքարկման համար սահմանված եռօրյա ժամկետի կեսը բոլորովին օրինական նպատակով փաստացի կարող է կորուսվել անհաջող իրավական կառուցակարգերի պատճառով:

4. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ գործի քննության ընդունումը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

4.1. ՀՀ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 5-րդ մասի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների մասով դիմումն ակնհայտ անհիմն է:

Վիճարկվող դրույթների հակասահմանադրականության վերաբերյալ դիմողի ներկայացրած փաստարկները հիմնականում հանգում են նրան, որ խնդրո առարկա դրույթներով նախատեսված իրավակարգավորումներով իր վրա դրվում է իրավական որոշակիության սկզբունքին չհամապատասխանող և անկանխատեսելի, ինչպես նաև օրենքով չսահմանված անհամաչափ և իրավաչափ նպատակ չհետապնդող պարտավորություն: Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 209-րդ հոդվածի համաձայն՝ հայցադիմումը վարչական դատարան կարող է ներկայացվել 3 օրացուցային օրվա ընթացքում այն օրվանից, երբ հայցվորն իմացել է կամ պարտավոր էր իմանալ իր ընտրական իրավունքի խախտման մասին: ՀՀ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում դիմումի կամ բողոքի (այսուհետ՝ դիմում) քննարկման մասին դիմումատուն կամ բողոք ներկայացնողը (այսուհետ՝ դիմումատու) ծանուցվում է դիմումի քննարկման օրվա և ժամի մասին հանձնաժողովի համացանցային կայքում տեղեկություն տեղադրելու միջոցով: Եթե դիմումում նշված է էլեկտրոնային կապի որևէ միջոց՝ հեռախոսահամար, էլեկտրոնային փոստային հասցե (այսուհետ՝ էլեկտրոնային կապի միջոց), ապա դիմումատուն տեղեկացվում է նաև այդ միջոցով, ըստ հնարավորության՝ նաև կարճ հաղորդագրություն ուղարկելու միջոցով: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ընդունած վարչական ակտն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու

պահից: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ընդունած վարչական ակտը տեղադրվում է հանձնաժողովի համացանցային կայքում ՀՀ ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում /մինչև հաջորդ օրվա ավարտը/: Նշյալ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ընտրական հանձնաժողովի վարչական ակտն ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ուղարկվում է վարչական վարույթի մասնակիցներին՝ առաքման անդորրագիրը կցելով գործին, եթե այդ ակտը վարույթի մասնակիցները հանձնաժողովում չեն ստացել: Եթե դիմումը ներկայացվել է մեկից ավելի դիմումատուների կողմից համատեղ, ապա ընդունված վարչական ակտն ուղարկվում է դիմումում առաջինը նշված դիմումատուին: Վերոնշյալ իրավակարգավորումների համատեքստում ակնհայտ անհիմն են դիմողի պնդումներն առ այն, որ վիճարկվող դրույթների իրավական անորոշությամբ պայմանավորված անորոշ է մնում այն, թե կոնկրետ որ պահն է հանդիսանում որոշման բողոքարկման ժամկետի հաշվարկման սկիզբ կամ՝ որ խնդրո առարկա դրույթներով նախատեսված իրավակարգավորումներով իր վրա դրվում է իրավական որոշակիության սկզբունքին չհամապատասխանող և անկանխատեսելի պարտավորություն:

Այսպես, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումների քննությունը,... կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է ...: Այս պահանջի լույսի ներքո Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս անձը պետք է հստակ պատկերացնի իր նկատմամբ վերջնական դատական ակտով կիրառված օրենքի **նորմի բովանդակությունը** և փորձի գնահատել ու նախատեսել սահմանադրական դատարանում իր իրավունքների պաշտպանությանն ուղղված և Սահմանադրությամբ ու օրենքով թույլատրելի հետագա գործողությունները, ինչպես նաև պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել և ի՞նչ է ակնկալում Սահմանադրական դատարանում դիմումի քննության արդյունքում: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի օրենքի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և

Սահմանադրության այն դրույթներին, որոնց, ըստ դիմողի, հակասում են տվյալ դրույթները: Միաժամանակ, դիմողը պետք է նաև հիմնավոր և պատշաճ ձևով հիմնավորի, թե իր կողմից վիճարկվող նորմերի «հակասահմանադրականության» արդյունքում իր որ սահմանադրական իրավունքն է խախտվել, ինչպես նաև հիմնավորի իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, պահանջներ, **որոնք չպահպանելը**, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի և ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-839 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է,

4.2. դիմումին կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի կողմից վիճարկվող **ՀՀ ընտրական օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի և 48-րդ հոդվածի 7-րդ մասի** դրույթները չեն կիրառվել նրա նկատմամբ:

Անհատական դիմումին առաջադրվող սահմանադրական և օրենսդրական պահանջներից մեկն էլ այն է, որ անհատական դիմում կարող է ներկայացնել այն անձը, որի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից կիրառվել է օրենքի դրույթ:

Համաձայն 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»: ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը սահմանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները: Դիմում կարող է ներկայացնել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը,

- որը հանդիսացել է ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից,

- որի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից կիրառվել է օրենքի դրույթ,

- որի նկատմամբ վիճարկվող դրույթը կիրառվել է գործը լուծող վերջնական դատական ակտով,

- որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ, 6-րդ կետերով և 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Արշակ Մկրտչյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

4 ապրիլի 2018 թվականի
ՍԴԴԿՈ/2-10